ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագիծը կազմվել է ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով , համաձայն որի համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է և համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կարեն Գրիշայի Հովհաննիսյանը Սիսիան համայնքի ավագանու անդամ է:

Լիազոր մարմնի կողմից աշխատակազմի հաստատված հաստիքացուցակը համայնքապետարանի աշխատակազմին ներկայացվել է 2023 թվականի մայիսի 17-ին, այդ իսկ պատճառով սույն նախագիծը ներկայացվում է օրակարգից դուրս:

Աշխատակազմի քարտուղարի
Լիազորությունները կատարող՝ Ա. Կարապետյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսերի և եկամուտների փոփոխություն չի լինի, քանի որ բյուջեի աշխատակազմի աշխատավարձի ֆոնդում համապատասխան միջոցներն արդեն իսկ նախատեսված են:

Աշխատակազմի քարտուղարի
Լիազորությունները կատարող՝ Ա. Կարապետյան